



**ՀՖՖ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ՖՈՒՏԲՈՒԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
մրցաշրջան 2020-2021թթ.**





ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 3

ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ..... 7

 Հոդված 1. Կանոնակարգի առարկան, նպատակը և խնդիրները 7

 Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները 7

 Հոդված 3. Մրցումների բարեվարքային համակարգը 8

 Հոդված 4. ՀՖՖ գործառույթները..... 9

 Հոդված 5. Մրցաշրջանի ընթացքում ակումբների պարտականությունները 10

 Հոդված 6. Մրցումներին մասնակցության չափանիշները և մասնակցության համար դիմելու կարգը 11

ԳԼՈՒԽ 2: ՄՐՅՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ..... 12

 Հոդված 7. *Մրցումների տարիքային խմբերը, անցկացման կարգը, ժամկետները և փոխարինումը* 12

 Հոդված 8. *Ֆուտբոլիստների մասնակցությունը խաղին* 18

 Հոդված 9. «Արդար խաղը» և գնահատման կարգը 18

 Հոդված 10. Պարգևատրումը 19

 Հոդված 11. Մրցումների վայրը և խաղացանկերը..... 20

 Հոդված 12. Խաղի անցկացման կարգը 21

 Հոդված 13. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը 21

 Հոդված 14. Չկայացած և անավարտ խաղերը..... 22

 Հոդված 15. Թիմերի չներկայանալը խաղին, առաջնություններին մասնակցությունից հրաժարվելը կամ առաջնություններից հեռացվելը 26

 Հոդված 16. Վիճարկում..... 26

ԳԼՈՒԽ 3: ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ 27

 Հոդված 17. Խաղերի կազմակերպումը և սպասարկող անձնակազմի նշանակումը..... 27

ԳԼՈՒԽ 4: ԴԱՇՏԻ ՏԵՐ ԱԿՈՒՄԲԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 30

 Հոդված 18. Դաշտի տեր ակումբի /ներկայացնող կազմակերպության/ պարտականությունները 30



ԳԼՈՒԽ 5: ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ	31
Հոդված 19. Մրցումների մասնակիցների հայտավորումը և վերահայտավորումը.....	31
ԳԼՈՒԽ 6: ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ	35
Հոդված 20. Այլ հարցեր	35



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՖՖ	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
ՖԻՖԱ	Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիա
ՈՒԵՖԱ	Ֆուտբոլի եվրոպական ասոցիացիաների միություն
ՀՖՖ Գործադիր կոմիտե	ՀՖՖ-ի կանոնադրությամբ նախատեսված կոլեգիալ կառավարման մարմին
Ակումբ	Մարզական առումով ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կանոնակարգերին և սահմանված նորմերին ենթարկվող ֆուտբոլային մարզական ակումբ (թիմ), որը մասնակցում է կամ ցանկանում է մասնակցել ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող ֆուտբոլային մրցումներին
Կանոնակարգ	ՀՖՖ պրոֆեսիոնալ մրցումների անցկացման կանոնակարգ (2020-2021 մրցաշրջան)
Առաջնություն	Տվյալ մրցաշրջանի պրոֆեսիոնալ ֆուտբոլի ԲԽ և ԱԽ ակումբների միջև անցկացվող ՀՀ ֆուտբոլի առաջնություն:
Պաշտոնական խաղեր	Կազմակերպված ֆուտբոլի շրջանակներում անցկացվող խաղեր՝ ազգային առաջնությունների, գավաթի խաղարկության, միջազգային ակումբային մրցաշարերի հանդիպումներ
Մրցումներ	ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցաշարեր Հայաստանի Բարձրագույն և



	Առաջին խմբերի առաջնությունների և Հայաստանի գավաթի խաղարկություն
Ֆուտբոլային սուբյեկտներ	Պրոֆեսիոնալ ֆուտբոլում ներգրավված իրավաբանական և ֆիզիկական անձինք
Տեսուչ	ՀՖՖ-ի՝ մրցավարի, մրցավարի օգնականների, և չորրորդ պաշտոնյայի գործողությունները գնահատող ներկայացուցիչ
Մրցավար	Խաղի՝ ՀՖՖ-ի կողմից նշանակված մրցավար
Մրցավարի օգնական	Խաղի մրցավարի՝ ՀՖՖ-ի կողմից նշանակված օգնական
Չորրորդ պաշտոնյա	Խաղի՝ ՀՖՖ-ի կողմից նշանակված չորրորդ պաշտոնյա
Հանդիպման կազմակերպիչ	Դաշտի տեր ակումբ, որն ապահովում է ֆուտբոլային հանդիպման կազմակերպման և անցկացման աշխատանքները
Պաշտոնյա	ՀՖՖ-ի լիազորված հաստիքային աշխատակից, պատվիրակ, տեսուչ, հանձնակատար, կոմիտեի անդամ, հանձնաժողովների և ՀՖՖ-ի այլ իրավասու մարմինների անդամ
Ակումբի պաշտոնյա	Ակումբի աշխատակից, այդ թվում՝ մարզչական, տեխնիկական և ղեկավար անձնակազմի անդամ, որը հայտավորված է ՀՖՖ-ի պրոֆեսիոնալ մրցումներին մասնակցելու նպատակով
Հանդիպման մասնակից	Ֆուտբոլիստ, ակումբի պաշտոնյա, հանդիպումը սպասարկող անձնակազմ և հանձնակատար



Խաղի կանոններ	Ֆուտբոլ խաղի գործող կանոններ
Մրցաշրջան	Ժամանակաշրջան, որը մեկնարկում է օրացուցային տվյալ տարվա օգոստոսի 1-ին և ավարտվում հաջորդ տարվա հունիսի 30-ին
Խաղաշրջան	Ֆուտբոլային տարվա կտրվածքով առաջին պաշտոնական խաղով մեկնարկող և վերջին պաշտոնական խաղով ավարտվող ժամանակաշրջան
Մարզադաշտ	ՀՖՖ-ի կողմից համապատասխանելիության հավաստագիր ստացած մարզական շինություն, որտեղ անցկացվում է ֆուտբոլային հանդիպումը
Մարզադաշտի սեփականատեր/վարձակալ	Իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը հանդիսանում է այն մարզադաշտի սեփականատերը կամ վարձակալը, որտեղ անցկացվում է տվյալ հանդիպումը (խաղ)
Արտակարգ իրավիճակ/Ֆորս-մաժոր	Ֆորս-մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են հանդիպման մասնակցի և կազմակերպչի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական և տեխնաժին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), համաճարակները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, գործադուլները,



որոնք խոչընդոտում են ֆուտբոլային հանդիպման՝ պատշաճ և ըստ նախատեսվածի կազմակերպմանը և/կամ անցկացմանը

Խաղի ժամանակահատված

Խաղասկզբից 2 ժամ առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը և խաղից 1 ժամ հետո ընկած ժամանակահատված



ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Կանոնակարգի առարկան, նպատակը և խնդիրները

1.01. Սույն կանոնակարգը սահմանում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող մրցումների կազմակերպման և անցկացման սկզբունքները, ֆուտբոլային սուբյեկտների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և այլ ընթացակարգային հարցերը տվյալ մրցումների ընթացքում, կարգավորում է մանկապատանեկան ֆուտբոլի, մրցումներին մասնակցող ակումբների իրավունքներն ու պարտականությունները:

1.02. Կանոնակարգի խնդիրներն են՝

ա) մրցումների կազմակերպման, անցկացման, ղեկավարման և հսկողության ընթացակարգերի սահմանումը,

բ) մրցումների մասնակիցների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և ապահովումը,

գ) մրցումների համակարգի համապատասխանեցումը ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի հիմնարար փաստաթղթերի պահանջներին:

Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները

2.01. Մրցումների նպատակն է՝

ա) ՀՀ տարածքում մանկապատանեկան ֆուտբոլի հետագա զարգացմանը նպաստելը,

բ) նպաստել ֆուտբոլիստների մասնագիտական որակների և ուսուցման պրոցեսի մակարդակի հետագա բարձրացմանը,

գ) ապահովել ազգաբնակչության մանկապատանեկան հասակի երեխաների համակողմանի ֆիզիկական զարգացումը:

դ) նպաստել մանկապատանեկան, ազգային հավաքական թիմերի ձևավորմանը,



ե) նպաստել բարձրագույն և առաջին խմբերի թիմերի համալրման համար արժանի հերթափոխի պատրաստման գործընթացին

զ) «Արդար խաղի» սկզբունքների արմատավորմանը և կենսագործմանը նպաստելը:

2.02. Մրցումների խնդիրներն են՝

ա) տարիքային խմբերի առաջնությունում թիմերի դասակարգումը՝ ըստ առաջնության արդյունքների,

բ) ի հայտ բերել տարբեր տարիքային խմբերի մրցանակակիրներին

գ) մրցաշրջանի մրցանակակիրների որոշումը հետևյալ դասակարգմամբ՝

- ✓ Մ-18, Մ-16, Մ-14 A, B և C խմբերի առաջնությունների ռմբարկուներ,
- ✓ Մ-18, Մ-16, Մ-14 A, B և C խմբերի առաջնությունների լավագույն ֆուտբոլիստներ,
- ✓ այլ մրցանակակիրներ:

Հոդված 3. Մրցումների բարեվարքային համակարգը

3.01. Մրցումների բարեվարքային համակարգն ապահովելու նպատակով՝

ա) արգելվում է միևնույն իրավաբանական կամ ֆիզիկական անձի կամ նրա հետ փոխկապակցված անձանց կողմից ֆինանսավորվող մեկից ավելի ակումբների մասնակցությունը ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների տվյալ առաջնությանը,

բ) արգելվում է որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի ուղղակի կամ անուղղակի միաժամանակյա ցանկացած ներգրավվածությունը ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների տվյալ առաջնությանը մասնակից մեկից ավելի ակումբների վարչական և/կամ մարզական ղեկավարմանը,

գ) արգելվում է որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի ցանկացած վերահսկողությունը կամ այլ կերպ դրսևորվող ազդեցությունը ՀՖՖ-ի հովանու



ներքո անցկացվող մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների տվյալ առաջնությանը մասնակից մեկից ավելի ակումբների նկատմամբ:

3.02. Արգելվում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող մանկապատանեկան ֆուտբոլի մրցումներին մասնակից ակումբների և/կամ ֆուտբոլային բոլոր սուբյեկտների կողմից պայմանավորված խաղեր կազմակերպելը, կազմակերպման փորձ կատարելը կամ այդ արարքների մասին չհայտնելը:

3.03. Սույն հոդվածի 3.01. մասի «ա» կետով սահմանված անձի՝ փոխկապակցված լինելու հանգամանքը որոշում է ՀՖՖ-ն՝ հիմք ընդունելով ՀՀ օրենսդրության, ՀՖՖ-ի, ՌԻԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կանոնակարգերի դրույթները:

Հոդված 4. ՀՖՖ գործառույթները

4.01. ՀՖՖ-ն իրականացնում է մրցումների ընդհանուր ղեկավարումը, մասնավորապես՝

ա) հաստատում է մրցումների անցկացման կանոնակարգը և խաղացանկերը,

բ) գրանցում է մրցումների մասնակից ֆուտբոլային սուբյեկտների միջև իրավահարաբերությունները կարգավորող փաստաթղթերը (աշխատանքային, ֆուտբոլիստների տեղափոխման պայմանագրերը և այլն),

գ) իրականացնում է թիմերի, դրանց ֆուտբոլիստների և պաշտոնյաների հայտավորումը,

դ) հաստատում է մրցումները սպասարկող մրցավարների, տեսուչների կազմերը,

ե) կազմակերպում է խաղերը և իրականացնում դրանց նկատմամբ հսկողությունը,

զ) ամփոփում է հանդիպումների արդյունքները,

է) հաստատում է առաջնությունների արդյունքները և իրականացնում է մրցանակակիրների պարգևատրումը,

ը) իրականացնում է մրցումների կազմակերպումից բխող այլ գործառույթներ:



Հոդված 5. Մրցաշրջանի ընթացքում ակումբների պարտականությունները

5.01. Մրցաշրջանի ընթացքում ակումբները պարտավոր են՝

ա) տարեկան առնվազն երկու անգամ ապահովել իրենց ֆուտբոլիստների բժշկական զննումը որը պետք է ուղարկվի ՀՖՖ ՄԿԱ բաժնի պաշտոնական youthcompetition@ffa.am էլեկտրոնային հասցեին:

Բուժզննումն անցկացվում է ՀՀ Առողջապահության նախարարության բժշկական կենտրոնում, կամ մարզային պոլիկլինիկաներում /բուժմիավորումներում: Սույն կետի շրջանակներում ակումբները ամբողջական և համապարփակ պատասխանատվություն են կրում սահմանված պարտականության չկատարման և/կամ ոչ պատշաճ կատարման համար:

բ) հոգալ ակումբի թիմ/եր/ի ծախսերը /ճանապարհածախսը, օրապահիկը, գիշերավարձը և այլ/,

գ) վարել ֆուտբոլիստների ստացած դեղին քարտերի հաշվառումը և կիրառել Կարգապահական կանոնակարգի 37-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերի պատժամիջոցներն՝ առանց ՀՖՖ-ի Կարգապահական կոմիտեի որոշման: Առաջնության և գավաթի խաղարկության խաղերին ֆուտբոլիստների ստացած դեղին քարտերը հաշվարկվում են ընդհանուր՝ /բացառություն են կազմում Մ-12 և Մ-10 մանկական խաղերը:

5.02. Ակումբները պատասխանատու են՝

ա) խաղի արձանագրությունում նշված ֆուտբոլիստների և պաշտոնյաների՝ խաղին մասնակցելու իրավասության առկայության համար (խաղի արձանագրությունում նշված լինելը համարվում է խաղին մասնակցություն),

բ) Ակումբում գրանցված /հայտավորված/ ֆուտբոլիստների առողջական վիճակի համար,

գ) խաղի ժամանակահատվածում (թիմերի և պաշտոնյաների՝ մարզադաշտ ժամանման պահից սկսած) և դրանից հետո իրենց ֆուտբոլիստների, նրանց ծնողների, պաշտոնյաների, վարչական անձնակազմի, ինչպես նաև հանդիսատեսի, թիմի երկրպագուների/ անօրեն, անթույլատրելի և անվայել գործողությունների համար,

մարզադաշտում հանդերձարանների, շինությունների և գույքի պատշաճ վիճակի պահպանման համար,

դ) ՀՖՖ-ին ոչ հավաստի տեղեկություն պաշտոնապես ներկայացնելու համար:



5.03. Ակումբներին արգելվում է՝

ա) միջամտել խաղը սպասարկող անձնակազմի գործողություններին, այն է՝ կատարել այնպիսի գործողություն կամ անգործություն, որը խոչընդոտում է կամ կարող է խոչընդոտել խաղը սպասարկող անձնակազմի բնականոն գործունեությանը կամ կարող է ազդել խաղի ընթացքի կամ ելքի վրա,

բ) ներկայացնել ՀՖՖ-ն կամ օգտագործել ՀՖՖ-ի դրոշը և խորհրդանշանը (լոգո)՝ բացառությամբ ՀՖՖ-ի կողմից տրված գրավոր թույլտվության առկայության դեպքերի,

գ) մրցումների շրջանակներում և հրապարակային գործողություններ կատարելիս օգտագործել ակումբի այնպիսի անվանում կամ խորհրդանշան (լոգո) (այդ թվում՝ կոմերցիոն գործընկերոջ անվանում), որը ՀՖՖ-ում գրանցված չէ տվյալ ակումբի անվամբ:

Հոդված 6. Մրցումներին մասնակցության չափանիշները և մասնակցության համար դիմելու կարգը

6.01. Մրցումներին կարող են մասնակցել այն ակումբները, որոնք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ, ընդունում են ՀՖՖ-ի, ՈԻԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի հիմնարար սկզբունքները, կանոնադրություններն ու կանոնակարգերը, ՀՖՖ-ի նկատմամբ չունեն չկատարված պարտավորություն(ներ), այդ թվում՝ չվճարված տուգանք կամ չմարված կարգապահական տույժ, և պարտավորվում են կատարել վերոնշյալ կազմակերպությունների, ինչպես նաև սույն կանոնակարգի պահանջները:

6.02. Թիմերը ներկայացնող Ակումբները հաստատում են իրենց թիմի /թիմերի/ մասնակցությունը մրցումներին՝ մինչև 2020թ. սեպտեմբերի 15-ը ՀՖՖ ներկայացնելով սահմանված կարգի «Հավաստագիր», որտեղ պետք է նշել թիմի անվանումը, առաջնությանը մասնակցող տարիքային խումբը, մարզադաշտը, որտեղ անցկացնելու են տնային հանդիպումները:

6.03. Առաջնություններին մասնակցելու համար մուտքավճար չի պահանջվում :



- 6.04. Թիմ/եր/ը ներկայացնող ակումբը նախորդ մրցաշրջանում գոյացած դրամական պարտքերի առկայության դեպքում, պետք է մարի այն մինչև «Հավաստագիրի» ներկայացնելը :
- 6.05. Թիմի անձնակազմի կողմից սույն Կանոնակարգի դրույթների բոլոր խախտումների համար պատասխանատվությունը կրում է ներկայացնող ակումբը:

ԳԼՈՒԽ 2: ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Հոդված 7. Մրցումների տարիքային խմբերը, անցկացման կարգը, ժամկետները և փոխարինումը

Մրցումները անցկացվում են հետևյալ տարիքային խմբերով՝

- 7.01. ՀՀ մինչև 18 տարեկանների պատանեկան առաջնություններին՝ Մ-18A, Մ-18B, Մ-18C, իրավունք ունեն մասնակցելու 2003-2004թթ. ծնված ֆուտբոլիստները, բացառությամբ 2005թ. ծնված որոշ դեպքերի:

Մ-18A և Մ-18B առաջնությունները կանցկացվեն մեկ խմբով, իսկ Մ-18C առաջնությունների մասնակից թիմերն ընդգրկվում են մինչև 4-ական խմբերում՝ ըստ տարածաշրջանների:

A և B խմբերում կմասնակցեն 2019-2020թթ. խաղաշրջանում բարձր վարկանիշ ցուցաբերած թիմերը՝ A խմբում՝ 8 թիմ, B խմբում՝ 10 թիմ:

A և B խմբերում մասնակցության իրավունք ունի յուրաքանչյուր ակումբից միայն մեկ թիմ: A խմբում բացառության կարգով կարող են մասնակցել ՀՖՖ ֆուտբոլի ակադմիայի 2004թ. և 2005թ. ծնված ֆուտբոլիստներից կազմված 2 թիմեր, որոնք հանդիսանում են Հայաստանի հավաքական թիմերի համապատասխան տարիքային խմբերի թեկնածուներ: C խմբում ընդգրկվում են A և B խմբերում չընդգրկված թիմերը:

Հաջորդ 2021-2022թթ. խաղաշրջանում A և B խմբերում կմասնակցեն 2020-2021թթ. խաղաշրջանի Մ-18A, Մ-18B և Մ-18C առաջնություններում առավել բարձր վարկանիշ ձեռքբերած թիմերը՝ A խմբում՝ 8 թիմ, B խմբում՝ 10 թիմ:

Մ-18A առաջնությունը անցկացվում է առանձին խմբով, շրջանաձև՝ երեք շրջանով:



Թիմերն առաջին երկու շրջաններում հանդիպումներն անցկացնում են սեփական և մրցակցի հարկի տակ, իսկ երրորդ շրջանում խաղերն անցկացվում են առաջին շրջանի նման՝ ըստ վիճակահանության:

Մ-18B, Մ-18C առաջնություններն անցկացվում են առանձին խմբերով, շրջանաձև՝ երկու շրջանով: Թիմերն առաջին և երկրորդ շրջաններում հանդիպումներն անցկացնում են սեփական և մրցակցի հարկի տակ: /C/ խմբի քանակի՝ երկուսը լինելու դեպքում, խմբերի 1-ին և 2-րդ տեղերը գրաված թիմերը կխաղան /C/ խմբի 1-ից 3-րդ տեղերի համար, երեք և ավելի խմբերի դեպքում՝ խմբերում 1-ին տեղը գրաված թիմերը կխաղան /C/ խմբի 1-ից 3-րդ տեղերի համար:

Մ-18 տարիքային առաջնությունների հանդիպումների ժամանակ միևնույն ակումբի C խմբում հայտավորված ֆուտբոլիստները կարող են մասնակցել A և B խմբերում մասնակցող իրենց մյուս թիմերի հանդիպումներին:

Մ-18 տարիքային առաջնությունների հանդիպումների ժամանակ միևնույն ակումբի B խմբում հայտավորված ֆուտբոլիստները կարող են մասնակցել A խմբում հանդես եկող իրենց մյուս թիմի հանդիպումներին, և 2 ֆուտբոլիստ՝ C խմբերում մասնակցող իրենց մյուս թիմի հանդիպումներին:

Մ-18 տարիքային առաջնությունների հանդիպումների ժամանակ միևնույն ակումբի A խմբում հայտավորված ֆուտբոլիստներից 2-ը կարող են մասնակցել B խմբերում մասնակցող իրենց մյուս թիմի հանդիպումներին:

Մ-18 տարիքային խմբերի առաջնությունների խաղերի արձանագրության մեջ լրացվում է մինչև 20 ֆուտբոլիստ՝ 11 հիմնական և մինչև 9 պահեստային: Խաղի ընթացքում թույլատրվում է փոխարինել մինչև 9 ֆուտբոլիստի:

7.02. ՀՀ մինչև 16 տարեկանների մանկապատանեկան առաջնություններ՝ Մ-16A, Մ-16B, Մ-16C, առաջնություններին իրավունք ունեն մասնակցելու 2005-2006թթ. ծնված ֆուտբոլիստները: Մ-16A և Մ-16B առաջնությունները կանցկացվեն մեկ խմբով, իսկ Մ-16C առաջնությունների մասնակցից թիմերը ընդգրկվում են մինչև 4-ական խմբերում՝ ըստ տարածաշրջանների:

A և B խմբերում կմասնակցեն 2019-2020թթ. խաղաշրջանում բարձր վարկանիշ ցուցաբերած թիմերը՝ A խմբում՝ 8 թիմ, B խմբում՝ 10 թիմ:

A և B խմբերում մասնակցության իրավունք ունի յուրաքանչյուր ակումբից միայն մեկ թիմ: C խմբում ընդգրկվում են A և B խմբերում չընդգրկված թիմերը:

Հաջորդ՝ 2021-2022թթ. խաղաշրջանում A և B խմբերում կմասնակցեն 2020-2021թթ. խաղաշրջանի՝ Մ-16A, Մ-16B և Մ-16C առաջնություններում առավել բարձր վարկանիշ ցուցաբերած թիմերը՝ A խմբում՝ 8 թիմ, B խմբում՝ 10 թիմ:



/Մ-16A/ առաջնությունն անցկացվում է առանձին խմբով, շրջանաձև՝ երեք շրջանով: Թիմերն առաջին երկու շրջաններում հանդիպումներն անցկացնում են սեփական և մրցակցի հարկի տակ, իսկ երրորդ շրջանում խաղերն անցկացվում են առաջին շրջանի նման՝ ըստ վիճակահանության:

Մ-16B, Մ-16C առաջնություններն անցկացվում են առանձին խմբերով, շրջանաձև՝ երկու շրջանով: Թիմերն առաջին և երկրորդ շրջաններում հանդիպումներն անցկացնում են սեփական և մրցակցի հարկի տակ: /C/ խմբի քանակի՝ երկուսը լինելու դեպքում, խմբերի 1-ին և 2-րդ տեղերը գրաված թիմերը կխաղան /C/ խմբի՝ 1-ից 3-րդ տեղերի համար, երեք և ավելի խմբերի դեպքում՝ խմբերում 1-ին տեղը գրաված թիմերը կխաղան /C/ խմբի՝ 1-ից 3-րդ տեղերի համար:

Մ-16 տարիքային առաջնությունների հանդիպումների ժամանակ միևնույն ակումբի C խմբում հայտավորված ֆուտբոլիստները կարող են մասնակցել A և B խմբերում մասնակցող իրենց մյուս թիմերի հանդիպումներին:

Մ-16 տարիքային առաջնությունների հանդիպումների ժամանակ միևնույն ակումբի B խմբում հայտավորված ֆուտբոլիստները կարող են մասնակցել A խմբերին մասնակից իրենց մյուս թիմերի հանդիպումներին և 2 ֆուտբոլիստ՝ C խմբերին մասնակից իրենց մյուս թիմերի հանդիպումներին:

Մ-16 տարիքային առաջնությունների հանդիպումների ժամանակ միևնույն ակումբի A խմբում հայտավորված ֆուտբոլիստներից 2-ը կարող են մասնակցել B խմբերին մասնակից իրենց մյուս թիմերի հանդիպումներին:

Մ-16 տարիքային խմբերի առաջնությունների հանդիպումների արձանագրության մեջ լրացվում է նվազագույնը՝ 15 ֆուտբոլիստ, առավելագույնը՝ 20 ֆուտբոլիստ՝ 11 հիմնական և 4-9 պահեստային: Մ-16 տարիքային խմբերի առաջնությունների հանդիպումներում արձանագրության մեջ լրացված ֆուտբոլիստներից չորսը, այդ թվում՝ դարպասապահը, ենթակա են պարտադիր փոխարինման: Մնացած պահեստային ֆուտբոլիստները կարող են փոխարինվել ըստ մարզչի հայեցողության: Հիմնական կազմի և պարտադիր փոխարինման ենթակա ֆուտբոլիստները պետք է ստանան նվազագույնը 20 րոպե խաղային ժամանակահատված: Մնացած պահեստային ֆուտբոլիստների փոխարինումը կատարվում է ըստ մարզչի հայեցողության:

- 7.03.** ՀՀ մինչև 14 տարեկանների մանկապատանեկան առաջնություններին՝ Մ-14A, Մ-14B, Մ-14C, իրավունք ունեն մասնակցելու 2007-2008թթ. ծնված ֆուտբոլիստները: Մ-14A և Մ-14B առաջնությունները կանցկացվեն մեկ խմբով, իսկ Մ-14C



առաջնությունների մասնակից թիմերն ընդգրկվում են մինչև 4-ական խմբերում՝ ըստ տարածաշրջանների:

A և B խմբերում կմասնակցեն՝ 2019-2020թթ. խաղաշրջանում առավել բարձր վարկանիշ ցուցաբերած՝ A-ում՝ 8 թիմերը, B-ում՝ 10 թիմերը:

A և B խմբերում մասնակցության իրավունք ունի յուրաքանչյուր ակումբից միայն մեկ թիմ: C խմբում ընդգրկվում են A և B խմբերում չընդգրկված թիմերը:

Հաջորդ՝ 2021-2022թթ. խաղաշրջանում A և B խմբերում կմասնակցեն 2020-2021թթ. խաղաշրջանի՝ Մ-14A, Մ-14B և Մ-14C առաջնություններում առավել բարձր վարկանիշ ցուցաբերած թիմերը՝ A խմբում՝ 8 թիմ, B խմբում՝ 10 թիմ: B խմբում կթույլատրվի մասնակցել նույն ակումբից երկու թիմ:

/Մ-14A/ առաջնությունն անցկացվում է առանձին խմբով, շրջանաձև՝ երեք շրջանով: Թիմերն առաջին երկու շրջաններում հանդիպումներն անցկացնում են սեփական և մրցակցի հարկի տակ, իսկ երրորդ շրջանում խաղերն անցկացվում են առաջին շրջանի նման՝ ըստ վիճակահանության:

/Մ-14B/, /Մ-14C/ առաջնություններն անցկացվում են առանձին խմբերով, շրջանաձև՝ երկու շրջանով: Թիմերն առաջին և երկրորդ շրջաններում հանդիպումներն անցկացնում են սեփական և մրցակցի հարկի տակ: /C/ խմբի քանակի՝ երկուսը լինելու դեպքում, խմբերի 1-ին և 2-րդ տեղերը գրաված թիմերը կխաղան /C/ խմբի 1-ից 3-րդ տեղերի համար, երեք և ավելի խմբերի դեպքում, խմբերում 1-ին տեղը գրաված թիմերը կխաղան /C/ խմբի 1-ից 3-րդ տեղերի համար:

Մ-14 տարիքային առաջնությունների հանդիպումների ժամանակ միևնույն ակումբի C խմբում հայտավորված ֆուտբոլիստները կարող են մասնակցել A և B խմբերին մասնակից իրենց մյուս թիմերի հանդիպումներին:

Մ-14 տարիքային առաջնությունների հանդիպումների ժամանակ միևնույն ակումբի B խմբում հայտավորված ֆուտբոլիստները կարող են մասնակցել A խմբերին մասնակից իրենց մյուս թիմի հանդիպումներին և 2 ֆուտբոլիստ՝ C խմբերում մասնակցող իրենց մյուս թիմերի հանդիպումներին:

Մ-14 տարիքային առաջնությունների հանդիպումների ժամանակ միևնույն ակումբի A խմբում հայտավորված ֆուտբոլիստներից 2-ը կարող են մասնակցել B խմբերին մասնակից իրենց մյուս թիմերի հանդիպումներին:

Մ-14 տարիքային խմբերի առաջնությունների հանդիպումների արձանագրության մեջ լրացվում է նվազագույնը 15 ֆուտբոլիստ, առավելագույնը 20 ֆուտբոլիստ՝ 11 հիմնական և 4-9 պահեստային: Մ-14 տարիքային խմբերի առաջնությունների հանդիպումներում արձանագրության մեջ լրացված ֆուտբոլիստներից չորսը, այդ



թվում՝ դարպասապահը, ենթակա են պարտադիր փոխարինման: Մնացած պահեստային ֆուտբոլիստները կարող են փոխարինվել ըստ մարզչի հայեցողության: Հիմնական կազմի և պարտադիր փոխարինման ենթակա ֆուտբոլիստները պետք է ստանան նվազագույնը 20 րոպե խաղային ժամանակահատված: Մնացած պահեստային ֆուտբոլիստների փոխարինումը կատարվում է ըստ մարզչի հայեցողության:

7.04. ՀՀ մինչև 12 տարեկանների մանկական առաջնությանը՝ Մ-12, իրավունք ունեն մասնակցելու 2009-2010թթ. ծնված ֆուտբոլիստները: Մ-12 առաջնության մասնակից թիմերը ընդգրկվում են չորսական՝ 12Մ1, Մ-12Մ2, Մ-12Մ3 և Մ-12Մ4 խմբերում: Առաջնություններն անցկացվում են առանձին խմբերով, շրջանաձև՝ երկու շրջանով: Թիմերը առաջին և երկրորդ շրջաններում հանդիպումներն անցկացնում են սեփական և մրցակցի հարկի տակ: Մ-12 մանկական խաղերի ժամանակ մրցաշարային աղյուսակ չի կազմվում, հանդիպումների գոլերը և արդյունքները չեն արձանագրվում: Հանդիպումները կրում են ընկերական բնույթ: Մ-12 առաջնությունների խաղերի արձանագրության մեջ լրացվում է նվազագույնը 12 ֆուտբոլիստ, առավելագույնը՝ 16 ֆուտբոլիստ՝ 8 հիմնական և 4-8 պահեստային: Մ-12 տարիքային խմբերի առաջնությունների հանդիպումներին հայտավորված յուրաքանչյուր ֆուտբոլիստ, այդ թվում՝ դարպասապահը, պետք է ստանա նվազագույնը 30 րոպե խաղային ժամանակահատված: Երկրորդ դարպասապահ չլինելու դեպքում թիմի հիմնական դարպասապահը պարտադիր պետք է փոխարինվի այլ դիրքի խաղացողով:

Մ-12 տարիքային խմբերի առաջնությունների հանդիպումների յուրաքանչյուր խաղակեսի 15-րդ րոպեին մրցավարը պետք է հայտարարի 1-2 րոպե տևողությամբ ընդմիջում:

Ֆուտբոլիստների փոխարինումը և հետադարձ փոխարինումը կատարվում է փոքր և մեծ ընդմիջումների ժամանակ, բացառությամբ արտակարգ իրավիճակների:

7.05. ՀՀ մինչև 10 տարեկանների մանկական առաջնությանը՝ Մ-10, իրավունք ունեն մասնակցելու 2011-2012թթ. ծնված ֆուտբոլիստները: Մ-10 առաջնության մասնակից թիմերն ընդգրկվում են չորսական՝ 10Մ1, Մ-10Մ2, Մ-10Մ3 և Մ-10Մ4 խմբերում: Առաջնություններն անցկացվում են առանձին խմբերով, շրջանաձև՝ երկու շրջանով: Թիմերն առաջին և երկրորդ շրջաններում հանդիպումներն անցկացնում են սեփական և մրցակցի հարկի տակ: Մ-10 մանկական խաղերի ժամանակ մրցաշարային աղյուսակ չի կազմվում, հանդիպումների գոլերը և



արդյունքները չեն արձանագրվում: Հանդիպումները կրում են ընկերական բնույթ: Մ-10 առաջնությունների խաղերի արձանագրության մեջ լրացվում է նվազագույնը 10 ֆուտբոլիստ, առավելագույնը՝ 12 ֆուտբոլիստ՝ 6 հիմնական և 4-6 պահեստային: Մ-10 տարիքային խմբերի առաջնությունների հանդիպումներին հայտավորված յուրաքանչյուր ֆուտբոլիստ, այդ թվում՝ դարպասապահը, պետք է ստանա նվազագույնը 20 րոպե խաղային ժամանակահատված: Երկրորդ դարպասապահ չլինելու դեպքում թիմի հիմնական դարպասապահը պարտադիր պետք է փոխարինվի այլ դիրքի խաղացողով:

Մ-10 տարիքային խմբերի առաջնությունների հանդիպումների յուրաքանչյուր խաղակեսի 10-րդ րոպեին մրցավարը պետք է հայտարարի 1-2 րոպե տևողությամբ ընդմիջում:

Ֆուտբոլիստների փոխարինումը և հետադարձ փոխարինումը կատարվում է փոքր և մեծ ընդմիջումների ժամանակ, բացառությամբ արտակարգ իրավիճակների:

7.06. Մ-12 և Մ-10 առաջնությունները կանցկացվեն փոքրացված խաղադաշտերում՝ ըստ ներկայացված նկարի:

Երկարությունը

Մ-12՝ 45-65մ, Մ-10՝ 35-45մ

Լայնությունը

Մ-12՝ 30-40մ, Մ-10՝ 20-25մ

Դարպասի չափսերը

5մ լայնություն, 2մ բարձրություն,

Մ-10 խմբում թույլատրվում է նաև 3մ լայնություն և 2մ բարձրություն

Տուգանային հրապարակը

Մ-12՝ 9մ, Մ-10՝ 7մ


11 մետրանոց նշակետը

11 մետրանոց նշակետը փոխարինել 7 մետրանոց նշակետով

Խաղացողների քանակը

Մ-12՝ 8 v 8 դիմաց, Մ-10՝ 6 v 6 դիմաց:

Տուգանային, ազատ և անկյունային հարվածների ժամանակ մրցակից թիմի ֆուտբոլիստները պետք է գտնվեն գնդակից նվազագույնը 5մ հեռավորության վրա: «Խաղից դուրս» վիճակը գործում է միայն դարպասային գծին զուգահեռ և դարպասային գծից 12մ հեռավորության վրա սահմանված տարածքում՝ (տես





նկարում), իսկ Մ-10 տարիքային խմբի առաջնությունում «խաղից դուրս» վիճակը չի գործում:

Հետադարձ փոխարինումը թույլատրվում է:

Մ-10 տարիքային խմբի առաջնությունում դարպասապահին թույլատրվում է որսալ գնդակը թիմակցի կողմից կատարված ոտքով փոխանցումից հետո:

7.07. Մրցումների անցկացման ժամկետները

Առաջնություններն անցկացվում են 2020 թվականի հոկտեմբերից մինչև 2021 թվականի հունիս ամիսը ներառյալ:

7.08. Միննույն թիմի մասնակցությամբ երկու պաշտոնական խաղերի միջև ընկած ժամանակահատվածը պետք է լինի առնվազն 72 ժամ:

7.09. Խաղերի տևողությունը

Մ-18 - 90 րոպե (45 + 45)՝ մինչև 15 րոպե ընդմիջումով,

Մ-16 - 80 րոպե (40 + 40)՝ մինչև 15 րոպե ընդմիջումով,

Մ-14 - 70 րոպե (35 + 35)՝ մինչև 15 րոպե ընդմիջումով,

Մ-12 - 60 րոպե (30 + 30)՝ մինչև 10 րոպե ընդմիջումով,

Մ-10 - 40 րոպե (20 + 20)՝ մինչև 10 րոպե ընդմիջումով:

Հոդված 8. Ֆուտբոլիստների մասնակցությունը խաղին

8.01. Մրցումներին ֆուտբոլիստները մասնակցում են ֆուտբոլային անձնագրով կամ քաղաքացիական անձնագրով, իսկ պաշտոնյաները և 12 տարին չլրացած ֆուտբոլիստները մասնակցում են մասնակցի քարտերով:

8.02. Խաղի արձանագրությունում լրացվում է մինչև 5 պաշտոնյա:

Հոդված 9. «Արդար խաղը» և գնահատման կարգը

9.01. Տարիքային խմբերի առաջնություններում բոլորից քիչ տուգանային միավոր ստացած թիմը նվաճում է «Արդար խաղի» մրցանակը, պարգևատրվում է հուշանվերով և դիպլոմով: «Արդար խաղի» մրցապայքարում երկու կամ ավելի



թիմերի արդյունքների հավասարության դեպքում մրցանակը հանձնվում է առաջնությունում առավել բարձր տեղ գրաված թիմին: Տուգանային միավորները հաշվարկվում են հետևյալ ձևով՝

- ա) Ակումբի թիմի ֆուտբոլիստների յուրաքանչյուր ստացած քարտի դեպքում՝
 - ✓ կարմիր քարտ՝ 3 միավոր,
 - ✓ դեղինի քարտ՝ 1 միավոր,
- բ) Ակումբի թիմի վերաբերյալ ՀՖՖ-ի Կարգապահական կոմիտեի որոշումներով՝
 - ✓ տեխնիկական պարտություն ստանալու դեպքում՝ 3 միավոր,
 - ✓ կարգապահական կոմիտեի այլ որոշումներ, որոնք տեխնիկական պարտություն չեն սահմանում՝ 1 միավոր:

Հոդված 10. Պարզաստրումը

- 10.01. Առաջնություններում U-18/ABC/, U-16/ABC/ և U-14/ABC/ խմբերի առաջին տեղ գրաված թիմերը պարզաստրվում են փոխանցիկ գավաթով:
- 10.02. U-18/ABC/, U-16/ABC/ և U-14/ABC/ տարիքային խմբերի առաջնությունում 1-ին, 2-րդ, 3-րդ տեղ գրաված թիմերը, թիմերի ֆուտբոլիստները և մարզչական կազմը պարզաստրվում են ՀՖՖ-ի դիպլոմներով: Պարզաստրվող պաշտոնյաների ցուցակը ակումբի կողմից գրավոր կերպով պետք է ներկայացվի ՀՖՖ ՄԿԱ բաժին:
- 10.03. U-18/ABC/, U-16/ABC/ և U-14/ABC/ տարիքային խմբերի առաջնությունում լավագույն ֆուտբոլիստները ըստ խաղադիրքի՝ /դարպասապահ, պաշտպան, կիսապաշտպան և հարձակվող/ որոշվում է հաշվարկելով առաջնություններում մասնակից թիմերի մարզիչների կողմից ներկայացված ֆուտբոլիստների թեկնածուների ցուցակից՝ /ամեն խաղադիրքի համար երկու թեկնածու, որից մեկը պետք է լինի առաջնությունում մասնակցող մեկ այլ թիմի ֆուտբոլիստ/:
- 10.04. U-18/ABC/, U-16/ABC/ և U-14/ABC/ տարիքային խմբերի առաջնություններում լավագույն ոմբարկու/ներ/ ճանաչվում է/են/ առաջնությունում մրցակցի դարպասը առավելագույն անգամ գրաված ֆուտբոլիստը/ները/:



10.05. Տվյալ առաջնության լավագույնները պարգևատրվում են դիպլոմներով և հուշանվերներով:

Հոդված 11. Մրցումների վայրը և խաղացանկերը

11.01. Մրցումների մասնակից ակումբը մրցակցին ընդունում է «Մասնակցության հավաստագրում» նշված, սեփականության կամ օգտագործման իրավունքով իրեն պատկանող հիմնական կամ պահեստային մարզադաշտում: Մարզադաշտի ընդունումն իրականացնում է ՀՖՖ-ն և թույլատրում/կամ/արգելում է առաջնության հանդիպումների անցկացումը:

11.02. Յուրաքանչյուր խաղի համար տվյալ մարզադաշտի պատրաստ լինելը որոշում է խաղի մրցավարը:

11.03. Խաղի օրն առաջացած արտակարգ իրավիճակների/ֆորս-մաժորի, ինչպես նաև տվյալ հանդիպմանը մարզադաշտի՝ ցանկացած այլ պատճառով պատրաստ չլինելու դեպքում, հանդիպման մրցավարը կայացնում է վերջնական որոշում խաղը տվյալ մարզադաշտում անցկացնելու կամ հետաձգելու վերաբերյալ՝ նախապես խորհրդակցելով ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի հետ:

11.04. Մրցումների խաղացանկերը հաստատվում են ՀՖՖ ֆուտբոլի դեպարտամենտի ղեկավարի կողմից և դրանք տրամադրվում են ակումբներին ոչ ուշ, քան մրցումները սկսելուց 10 օր առաջ:

11.05. Հաստատված խաղացանկում փոփոխությունները կատարվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքում ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի որոշմամբ՝ տվյալ խաղին մրցող ակումբների գրությունների հիման վրա: Յուրաքանչյուր դեպքում վերջնական որոշումը կայացնում է ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը՝ ելնելով փոփոխության նպատակահարմարությունից:

11.06. Այն թիմերը, որոնք խաղն անցկացնելու ժամանակահատվածում չորս և ավելի խաղացողներ են գործուղել ՀՀ պատանեկան հավաքականներ, հանդիպումները հետաձգելու համար կարող են խաղացանկով նախատեսված օրից ոչ ուշ քան երկու աշխատանքային օր առաջ գրավոր դիմել ՀՖՖ:

11.07. Խաղերի ժամանակ դարպասացանցերը պարտադիր են:



11.08. Խաղացանկերը կազմվում են ըստ ընդունված Բերգերի համակարգի:

11.09. Թիմերի մեկնարկային դիրքը մրցաշարային աղյուսակում որոշվում է վիճակահանությամբ:

Հոդված 12. Խաղի անցկացման կարգը

12.01. Սույն կանոնակարգով սահմանված մանկապատանեկան մրցումների շրջանակներում հանդիպումներն անցկացվում են՝ համաձայն ֆուտբոլ խաղի կանոնների և սույն կանոնակարգի:

12.02. Խաղի սպասարկումն իրականացնում են ՀՖՖ Մրցավարական և տեսչական բաժնի կողմից նշանակված մրցավարներն ու տեսուչը:

12.03. Խաղը սկսելուց առաջ՝ համաձայն ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կողմից սահմանված ընդհանուր կարգի, թիմերի ֆուտբոլիստները և մրցավարները խաղադաշտում ողջունում են միմյանց և հանդիսականներին:

Հոդված 13. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը

13.01. Մանկապատանեկան Մ-18, Մ-16 և Մ-14 խմբերի առաջնություններում մրցաշարային աղյուսակում թիմերը դասակարգվում են ըստ վաստակած միավորների: Յուրաքանչյուր խաղի արդյունքներով գրանցած հաղթանակի համար թիմին շնորհվում է 3 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1 միավոր, իսկ պարտության դեպքում միավոր չի շնորհվում:

13.01. Մրցաշարային աղյուսակում երկու և ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում թիմերի դասակարգման ժամանակ առավելությունն՝ ըստ ստորև նշված հերթականության, տրվում է այն թիմին, որը՝

ա) հավակնորդ թիմերի միջև խաղերում վաստակել է ավելի շատ միավոր,

բ) հավակնորդ թիմերի միջև խաղերում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,

գ) հավակնորդ թիմերի միջև խաղերում խփել է ավելի շատ գոլ,



- դ) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում ունի ավելի շատ հաղթանակ,
- ե) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
- զ) տվյալ առաջնությունում ստացել է ավելի քիչ կարմիր քարտ,
- է) տվյալ առաջնությունում ստացել է ավելի քիչ դեղին քարտ,
- ը) ունի «Արդար խաղ»-ի առավել բարձր ցուցանիշ,
- թ) վիճակահանությամբ:

13.02. Թիմը առաջնությունից հանելու դեպքում բոլոր կայացած խաղերի արդյունքները չեղյալ են համարվում, իսկ դեռևս չկայացած խաղերը հանվում են խաղացանկից:

Հոդված 14. Չկայացած և անավարտ խաղերը

- 14.01.** Չկայացած կամ անավարտ են համարվում այն խաղերը, որոնք համապատասխանաբար չեն կայացել կամ ընդհատվել են և չեն շարունակվել հետևյալ պատճառներից որևէ մեկի հիմքով՝
- ա) եղանակային անբարենպաստ պայմաններ,
 - բ) ֆորս-մաժորային իրավիճակ,
 - գ) լուսավորման համակարգի խափանում, որը տեղի է ունեցել անկախ դաշտի տեր ակումբի կամքից և որը հնարավոր չի եղել վերականգնել 60 րոպեի ընթացքում,
 - դ) թիմի կողմից խաղադաշտի լքում,
 - ե) երրորդ անձանց միջամտություն, որն էականորեն խոչընդոտում կամ անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա:
 - զ) թիմի ֆուտբոլիստի, պաշտոնյայի և/կամ երկրպագուի անկարգապահ վարքագիծ, որը անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,
 - է) հասարակական կարգի այնպիսի խախտում, որը անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,
 - ը) թիմի կազմում 7-ից պակաս ֆուտբոլիստների առկայություն,



թ) անկանխատեսելի հանգամանք, որն անհնար է դարձնում խաղի, մեկնարկը, դրա ընթացքը և/կամ շարունակությունը կամ ազդում է խաղի արդյունքի վրա:

14.02. Խաղը չկայացած կամ անավարտ համարելու մասին որոշումը կայացնում է խաղի մրցավարը:

14.03. Եթե խաղը չի կայացել կամ ընդհատվել ու չի շարունակվել սույն հոդվածի 14.01 մասի «ա», «բ» կամ «գ» կետերի հիմքով՝ անկախ ակումբների կամքից, ապա այն տեղի է ունենում կամ շարունակվում է հաջորդ օրը նույն մարզադաշտում՝ խաղի ընդհատման բոլոր հաջորդող բոլոր պահերը: Եթե հանդիպումը չի կարող նշանակվել հաջորդ օրը, ապա ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը նշանակում է հանդիպումը մեկ այլ օր կամ օրացուցային պահեստային օր:

14.04. Տեղափոխված հանդիպման անցկացման վայրը մնում է անփոփոխ: Եթե որոշակի հանգամանքներով պայմանավորված հնարավոր չէ խաղն անցկացնել նախանշված վայրում, ապա ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը պետք է հանդիպումը վերանշանակի մեկ այլ խաղադաշտում:

14.05. Ֆորս-մաժորային իրավիճակներում և որոշ բացառություն կազմող դեպքերում, որոնց առկայության պարագայում վտանգվում է հանդիպման անցկացումը կամ հետագա ընթացքը, դաշտի տեր ակումբը պարտավոր է ապահովել պահեստային մարզադաշտով, որը խաղաշրջանի մեկնարկից առաջ պետք է ընդունված լինի ՀՖՖ Արտոնագրման բաժնի կողմից: ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը կարող է կիրառել բացառություններ պահեստային մարզադաշտերի՝ ՀՀ Ենթակառուցվածքային կանոնակարգի պահանջներին համապատասխանելիության հարցում:

14.06. Եթե մրցավարը որոշել է կանգնեցնել խաղը, ապա մնացած խաղաժամանակը պետք է անցկացվի հետևյալ պայմաններում.

ա) Խաղի արձանագրությունում պետք է լինեն միայն այն խաղացողները և պաշտոնյաները, որոնք հանդիպման դադարեցման պահին գտնվել են խաղադաշտում և/ կամ պահեստայինների նստարանին: Բացառություն են կազմում այն խաղացողները և պաշտոնյաները, որոնք մինչ հանդիպման դադարեցման պահը փոխարինվել են կամ հեռացվել: Հանդիպման դադարեցման պահին խաղադաշտում գտնված խաղացողները չպետք է նշվեն արձանագրության մեջ, որպես պահեստային խաղացող, երբ հանդիպումը վերսկսվի:



- բ) Բոլոր կարգապական տույժերն ու պատժամիջոցները, որոնք եղել են մինչ հանդիպման դադարեցումը, մնում են անփոփոխ:
- գ) Բոլոր զգուշացումները, որոնք տրվել են մինչ հանդիպման դադարեցումը, չեն հաշվարկվում դեղին քարտերի հաշվարկում, քանի դեռ հանդիպումն ամբողջությամբ չի ավարտվել:
- դ) Մինչ խաղի դադարեցումը հեռացված ֆուտբոլիստ(ներ)ը չեն կարող փոխարինվել մնացած խաղաժամանակում, և մեկնարկային կազմի խաղացողների քանակը մնում է անփոփոխ, որքան կազմում էր մինչ խաղի դադարեցվելը:
- 14.07.** Եթե անավարտ խաղին մասնակցած ֆուտբոլիստ(ներ)ը՝ առողջական խնդիրների պատճառով չի/չեն կարող մասնակցել խաղի շարունակությանը, իսկ թիմի՝ փոխարինումներ կատարելու հնարավորությունները սպառվել են, ապա ֆուտբոլիստ(ներ)ը կարող է/են փոխարինվել տվյալ խաղի արձանագրությունում նշված այն ֆուտբոլիստ(ներ)ով, որը(նք) ընդհատված խաղին չի/չեն մասնակցել: Եթե տվյալ խաղի արձանագրությունում պահեստային ֆուտբոլիստներ չկան, ապա տվյալ թիմը խաղին մասնակցում է առողջական խնդիրների պատճառով խաղի շարունակությանը մասնակցել չկարողացած ֆուտբոլիստների թվին հավասար պակաս թվով ֆուտբոլիստներով:
- 14.08.** Սույն հոդվածի 14.01 մասի «դ»-ից «թ» կետերով ամրագրված հիմքերով խաղն ընդհատվելու պարագայում այն չի շարունակվում, և չկայանալու պարագայում՝ չի վերախաղարկվում:
- 14.09.** Սույն հոդվածի 14.01 մասի «դ»-ից «թ» կետերով ամրագրված հիմքերով խաղն ընդհատվելու կամ չկայանալու դեպքում մեղավոր թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն՝ 0-3 հաշվով, իսկ մրցակցին՝ տեխնիկական հաղթանակ 3-0 հաշվով: Եթե խաղն ընդհատվել կամ չի կայացել երկու թիմերի մեղավորության կամ դիտավորության պատճառով, ապա երկու թիմերին գրանցվում է տեխնիկական պարտություն՝ 0-3 հաշվով: ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեն իրավասու է սահմանել այլ պատժամիջոցներ ՀՖՖ Կարգապահական և Էթիկային կանոնակարգի շրջանակներում:
- 14.10.** Սույն հոդվածի 14.01 մասի մասի «գ» կետով սահմանված դեպքում խաղի ընդհատման կամ չկայանալու դեպքում դաշտի տեր ակումբը պարտավոր է հյուր թիմին փոխհատուցել խաղի մասնակցության համար կատարված բոլոր փաստացի ծախսերը, ինչպես նաև փոխհատուցել ՀՖՖ-ին պատճառած կոմերցիոն այն բոլոր



- վնասները (բացառությամբ բաց թողնված եկամտի), որոնք առաջացել են տվյալ խաղի հեռարձակման խափանման հետևանքով:
- 14.11.** Եթե խաղը չի կայացել կամ ընդհատվել է լուսավորման համակարգի խափանման պատճառով և ՀՖՖ-ն համոզվում է, որ այդ խափանումը տեղի է ունեցել դաշտ տեր ակումբի մեղքով, ապա այդ ակումբի թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն՝ 0-3 հաշվով:
- 14.12.** Եթե թիմերի ֆուտբոլիստների կողմից դրսևորվել է այնպիսի անվայել վարքագիծ, որն անհնար է դարձրել խաղի մեկնարկը կամ շարունակությունը, ապա խաղը համարվում է կայացած, բայց թիմերի հաշվին միավոր չի գրանցվում:
- 14.13.** Եթե խաղի արդյունքը չեղյալ է համարվել, ապա խաղի ընթացքում գրանցված գույերը ումբարկուների հաշվարկում չեն ներառվում, իսկ կարգապահական բոլոր տույժերը, ինչպես նաև դեղին և կարմիր քարտերը մնում են ուժի մեջ:
- 14.14.** Չկայացած կամ անավարտ խաղերը, որտեղ որևէ թիմի հաշվին գրանցվել է տեխնիկական պարտություն, չեն կարող հաշվարկվել, որպես որակագրկումը մարելու միջոց:
- 14.15.** Ֆուտբոլիստների և ակումբի պաշտոնյաների որակագրկումները գործում են մինչև վերջիններիս կողմից բաց թողնվելիք խաղի, իսկ մեկից ավել խաղերի պարագայում՝ մինչև վերջին խաղի ավարտը ներառյալ: Որակագրկված ֆուտբոլիստը կամ պաշտոնյան իրավունք ունի մասնակցելու տվյալ խաղին, եթե բաց թողնվելիք վերջին խաղը տվյալ խաղի մեկնարկից առնվազն 60 րոպե առաջ ամբողջությամբ ավարտվել է:
- 14.16.** Անավարտ կամ չկայացած խաղի ընդհատվելու կամ չկայանալու պատճառը, ժամանակը և հաշիվը գրանցվում են տվյալ խաղի արձանագրության մեջ և տեսուչի կամ մրցավարի զեկույցում:
- 14.17.** Սույն հոդվածի 14.01 մասում նշված որևէ հիմքով ընդհատված, սակայն 30 րոպեի ընթացքում վերսկսած և բնականոն ընթացքով շարունակված խաղը անավարտ խաղ չի համարվում: Այդ խաղը վերսկսվում է ընդհատման րոպեին հաջորդող րոպեից, և խաղի շարունակության ժամանակ գործում են այն բոլոր կարգավորումները և կանոնները, որոնք կգործեն չընդհատված խաղի դեպքում: Այդ խաղի արձանագրությունում նշում է կատարվում խաղի ընդհատման



պատճառի, ընդհատման և վերսկսման ժամերի, ինչես նաև տեսուչի և/կամ մրցավարի կողմից կարևոր համարվող այլ հանգամանքների մասին:

Հոդված 15. Թիմերի չներկայանալը խաղին, առաջնություններին մասնակցությունից հրաժարվելը կամ առաջնություններից հեռացվելը

- 15.01. Անհարգելի պատճառով խաղին չներկայանալու, ինչպես նաև ժամանակին մարզադաշտը չտրամադրելու կամ անպատրաստ տրամադրելու դեպքում, խաղը համարվում է չկայացած: Մեղավոր թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն:
- 15.02. Թիմը համարվում է խաղին չներկայացած, եթե չի տեղեկացրել ուշացման պատճառների մասին և խաղասկզբին չի ներկայացել: Տեղեկացնելու դեպքում խաղասկիզբը կարող է հետաձգվել՝ ոչ ավելի քան Մ-18, Մ-16 առաջնությունում՝ 40 րոպե, Մ-14, Մ-12, և Մ-10 առաջնություններում՝ 30 րոպե:
- 15.03. Երեք տեխնիկական պարտության դեպքում թիմը հանվում է առաջնությունից՝ համաձայն ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կանոնակարգի:
- 15.04. Սույն կանոնակարգի դրույթները պարբերաբար խախտելու, ՀՖՖ-ի որոշումները չկատարելու և իր գործողություններով կամ անգործությամբ ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի հիմնարար սկզբունքները ռոնահարելու դեպքում թիմը ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշմամբ ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կանոնակարգով սահմանված կարգով կարող է հեռացվել տվյալ առաջնությունից:

Հոդված 16. Վիճարկում

- 16.01. Ակումբները կարող են վիճարկել «Ֆուտբոլ խաղի կանոնների» կամ սույն կանոնակարգի դրույթների այնպիսի խախտումը, որն ազդել է խաղի ելքի վրա:
- 16.02. Խախտման վիճարկումը գրանցելու համար ակումբի լիազորված անձը խաղից առավելագույնը 30 րոպե հետո պետք է պաշտոնապես դիմի խաղի տեսուչին կամ մրցավարին և լրացնի խաղի արձանագրության համապատասխան բաժինը՝



- ներկայացնելով վիճարկման հիմքերը, խախտման բնույթը, և ում կողմից է այն կատարվել:
- 16.03.** Սահմանված կարգով վիճարկումը գրանցելուց հետո ակումբը 24 ժամվա ընթացքում ՀՖՖ պաշտոնական էլեկտրոնային հասցեին է ներկայացնում տվյալ խախտման վերաբերյալ հիմնական վիճարկումը և վիճարկման տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը:
- 16.04.** Վիճարկման տուրքը յուրաքանչյուր վիճարկվող խախտման համար կազմում է 10,000 ՀՀ դրամ, որը վճարվում է ՀՖՖ հաշվեհամարին՝ բանկային փոխանցման միջոցով:
- 16.05.** Այն վիճարկման դիմումը, որը չի գրանցվել սույն հոդվածի 16.02 և/կամ 16.03 մասերին համապատասխան, թողնվում է առանց քննության:
- 16.06.** Վիճարկումը քննարկվում է ՀՖՖ-ի համապատասխան մարմնի կողմից՝ էլեկտրոնային փոստի միջոցով վիճարկումը և տուրքի անդորրագիրը ստանալու պահից մեկ շաբաթվա ընթացքում: Վիճարկման քննության արդյունքում ընդունվում է որոշում, որն էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվում է վիճարկումը ներկայացրած ակումբին և մրցակից ակումբին:
- 16.07.** Յուրաքանչյուր խախտման մասով վիճարկումը ՀՖՖ-ի համապատասխան մարմնի կողմից բավարարելու դեպքում վերադարձվում է այդ խախտման համար վճարված տուրքի գումարը՝ 10.000 ՀՀ դրամ:

ԳԼՈՒԽ 3: ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

Հոդված 17. Խաղերի կազմակերպումը և սպասարկող անձնակազմի նշանակումը

- 17.01.** Հանդիպումը սպասարկող մրցավարական անձնակազմը և տեսուչը նշանակվում են ՀՖՖ-ի մրցավարական և տեսչական բաժնի կողմից հետևյալ կազմով՝ Մ-18 առաջնության խաղերին - տեսուչ, մրցավար, մրցավարի երկու օգնական, 4-րդ պաշտոնյա, Մ-16, Մ-14 և Մ-12 խաղերին -մրցավար, մրցավարի երկու օգնական, Մ-10 խաղերին -մրցավար:



- 17.02.** Յուրաքանչյուր խաղից մեկ ժամ առաջ / Մ-14, Մ-12, և Մ-10 տարիքային խմբերի առաջնությունների ժամանակ 40 րոպե առաջ/ մրցավարն անցկացնում է նախախաղային խորհրդակցություն մրցող թիմերի մարզիչների և մրցավարական անձնակազմի մասնակցությամբ: Խորհրդակցության ընթացքում ճշտվում են խաղի անցկացման պայմաններն ու տրվում են համապատասխան հրահանգները մասնակիցներին:
- 17.03.** Թիմերի ներկայացուցիչները պարտավոր են խաղը սկսելուց ոչ ուշ քան 40 րոպե առաջ/Մ-14, Մ-12 և Մ-10 տարիքային խմբերի առաջնությունների ժամանակ՝ 30 րոպե առաջ/ խաղի մասնակիցների ցուցակը լրացված և ստորագրված հանձնել մրցավարական անձնակազմին:
Ցուցակին կից ներկայացվում է ներգրավված ֆուտբոլիստների ֆուտբոլային անձնագրերը, պաշտոնյաների և 12 տարին չլրացած ֆուտբոլիստների մասնակցի քարտերը: Ֆուտբոլային անձնագրերը և մասնակցի քարտերը թիմերին ետ են վերադարձվում խաղի ավարտից հետո:
Խաղի մասնակիցների ցուցակը ստորագրող պաշտոնյան պատասխանատու է ցուցակում նշված անձանց հետ կապված խախտումների համար: Խաղին կարող են մասնակցել /այդ թվում նաև գտնվել տեխնիկական գոտում/ միայն այն ֆուտբոլիստները և պաշտոնյաները, որոնք նշված են ցուցակում:
- 17.04.** Եթե թիմերից որևէ մեկը չունի պաշտոնյա, ապա խաղը չի անցկացվում: Եթե խաղի ընթացքում կարգապահական խախտման պատճառով թիմը մնացել է առանց պաշտոնյա /հեռացվել է խաղադաշտից/ ապա խաղը չի շարունակվում, որի համար մրցավարը համապատասխան գրառում է կատարում խաղի արձանագրությունում:
- 17.05.** Խաղը չկայանալու կամ ուշ սկսելու որոշումը պատկանում է խաղի տեսուչին/և/կամ/մրցավարին/, որի վերաբերյալ համապատասխան գրառում է կատարվում խաղի արձանագրությունում:
- 17.06.** Մրցավարները խաղասկզբից առաջ պետք է ստուգեն թիմերի մեկնարկային կազմերի ֆուտբոլիստների, ինչպես նաև խաղի ընթացքում փոխարինող ֆուտբոլիստների ինքնությունը:
- 17.07.** Ակումբների ներկայացուցիչները պատասխանատու են արձանագրությունում ընդգրկված ֆուտբոլիստների մասնակցության փաստաթղթերի իսկության համար:



17.08. Հանդիպման ընթացքում կամ ավարտից հետո, հանդիպմանը մասնակցած /արձանագրությունում լրացված/ ֆուտբոլիստների ինքնության վերաբերյալ մրցակիցների մոտ կասկած առաջանալու դեպքում, մրցակից թիմի մարզիչը /պաշտոնյան/ պարտավոր է այդ մասին հանդիպման ավարտից հետո կես ժամվա ընթացքում հայտնել խաղի տեսուչին/և/կամ/մրցավարին/ առաջացած կասկածի վերաբերյալ և լրացնի այդ մասին խաղի արձանագրությունում:

Արձանագրությունում պետք է նշվի ինքնության վերաբերյալ կասկած հարուցած ֆուտբոլիստի վերնաշապիկի համարը, նրա անուն-ազգանունը ըստ խաղի արձանագրության, կասկածի բնույթի մասին շարադրանքը, դիմում ներկայացնողի անուն-ազգանունը, պաշտոնը, ինչպես նաև ստորագրությունը և դիմումի ներկայացման ժամը: Ֆուտբոլիստների ինքնության ստուգման վերաբերյալ դիմում ստանալու դեպքում խաղը սպասարկող անձնակազմը պարտավոր է կազմակերպել և իրականացնել ստուգման հետևյալ գործառնությունները՝

Արձանագրությունում նշված ֆուտբոլիստը /ֆուտբոլիստները/ իր մարզչի հետ հրավիրվում է մրցավարական սենյակ, որտեղ խաղը սպասարկած մրցավարական խմբի անդամների և դիմում ներկայացրած անձի ներկայությամբ համեմատություն է կատարվում ֆուտբոլիստի /ֆուտբոլիստների/ և նրա վերաբերյալ ներկայացված խաղի մասնակցելության փաստաթղթի հետ:

Ստուգման արդյունքները ձևակերպվում է արձանագրությունում, որի տակ ստորագրում են՝ տեսուչը, մրցավարական անձնակազմը, երկու թիմերի մարզիչները: Կազմված արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում նշված անձինք, կարող են դրանք գրավոր կերպով ներառել արձանագրության մեջ: Խաղը սպասարկող անձնակազմում տեսուչի բացակայության դեպքում, տեսուչի պարտականությունները ենթակա են կատարման խաղի մրցավարի կողմից: Այն դիմումները որոնք չեն համապատասխանի վերը նշված դրույթներին քննության առարկա չեն դառնա:

17.09. Մ-18 և Մ-16 տարիքային խմբերի առաջնությունների հանդիպումներն անցկացվում են N 5 գնդակով, իսկ Մ-14, Մ-12 և Մ-10 տարիքային խմբերի առաջնությունների հանդիպումները՝ N 4 գնդակով:

17.10. Խաղի ընթացքում յուրաքանչյուր թիմից միաժամանակ նախավարժանք կարող են կատարել ոչ ավել, քան 4 ֆուտբոլիստ՝ տարբերիչ մարզահագուստով:



- 17.11. Ֆուտբոլիստների՝ վնասվածք ստանալու դեպքում, թիմերի բուժանձնակազմին խաղադաշտ մուտք գործելու իրավունքը տալիս է միայն մրցավարը:
- 17.12. Մրցող թիմերի մարզահագուստի գույների համընկնման դեպքում մարզահագուստը փոխում է հյուր թիմը:
- 17.13. Հանդիպման մրցավարը պարտավոր է տվյալ խաղի արձանագրությունը ներկայացնել ՀՖՖ՝ խաղին հաջորդող աշխատանքային օրը մինչ ժամը՝ 12:00-ն:
- 17.14. Խաղային ժամանակահատվածում ունեցած արտակարգ միջադեպերի մասին խաղը սպասարկող մրցավարը պարտավոր է զեկուցագիր ներկայացնել ՀՖՖ՝ խաղին հաջորդող աշխատանքային օրը մինչ ժամը՝ 12:00-ն:

ԳԼՈՒԽ 4: ԴԱՇՏԻ ՏԵՐ ԱԿՈՒՄԲԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 18. Դաշտի տեր ակումբի /ներկայացնող կազմակերպության/ պարտականությունները

- 18.01. Խաղային ժամանակահատվածում մարզադաշտում և դրան հարակից տարածքներում ապահովել հասարակական կարգի պահպանումն ու հանդիպման մասնակիցների անվտանգությունը ոստիկանության ծառայությունների միջոցով: Ոստիկանության աշխատակիցները պետք է լինեն համազգեստով: Բացառություն են կազմում Մ-16, Մ-14, Մ-12 և Մ-10 տարիքային խմբերի առաջնությունների խաղերը, որտեղ թույլատրվում է անվտանգությունն ապահովել՝ հյուրընկալող ակումբի սեփական ուժերով:
- 18.02. Ապահովել ոստիկանության ներկայացուցչի մասնակցությունը նախախաղային խորհրդակցությանը: Ոստիկանության բացակայության դեպքում դաշտի տեր ակումբը պարտավոր է անվտանգությունն ապահովել սեփական ուժերով, սակայն կիրառվում է պատժամիջոց ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կանոնակարգի համաձայն, /բացառությամբ Մ-16, Մ-14, Մ-12 և Մ-10 տարիքային խմբերի առաջնությունների հանդիպումների/:



- 18.03. Խաղը սպասարկող խմբին տրամադրել սենյակ՝ նախախաղային խորհրդակցությունն անցկացնելու համար և առնվազն երկու դրոշակ՝ մրցավարի օգնականների համար:
- 18.04. Ապահովել կողմնակի անձանց մուտքի արգելքը մրցավարական սենյակ:
- 18.05. Նախապատրաստել խաղադաշտը հանդիպմանը: Հյուրընկալող ակումբի մեղքով խաղասկզբին խաղադաշտը պատրաստ չլինելու դեպքում խաղը չի կայանում կամ ուշ է սկսվում /եթե ըստ պահանջների նախապատրաստելու համար լրացուցիչ ժամանակ է պետք, խաղասկզբը կարող է հետաձգվել մինչև 30 րոպե/ակումբի հանդեպ կիրառվում են պատժամիջոցներ:
- 18.06. Հանդիպման անցկացման համար ապահովել առնվազն երեք գնդակի առկայությունը:

ԳԼՈՒԽ 5: ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 19. Մրցումների մասնակիցների հայտավորումը և վերահայտավորումը

- 19.01 Հայտավորվել կամ /վերահայտավորվել/ կարող են այն ֆուտբոլիստները, որոնք գրանցված են թիմը ներկայացնող ակումբում: 12 տարին չլրացած ֆուտբոլիստներին գրանցում չի պահանջվում:
- 19.02 Հայտավորված, սակայն 12 տարին լրանալուց հետո չգրանցված ֆուտբոլիստներին խաղին մասնակից դարձնելու դեպքում, ակումբը տուգանվում է յուրաքանչյուր ֆուտբոլիստի մասնակցության համար, ըստ ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի:
- 19.03 Ֆուտբոլիստների գրանցումը /վերագրանցումը/ կատարվում է «Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության» Կանոնակարգի համաձայն սույն թվականի



հուլիսի 15-ից մինչև հոկտեմբերի 30-ը և 2021 թվականի փետրվարի 20-ից մինչև ապրիլի 20-ը ընկած ժամանակահատվածում:

19.04 Ֆուտբոլիստների հայտավորման /վերահայտավորման/ համար լրացվում է ՀՖՖ-ի կողմից սահմանված թերթիկը: Պարտադիր լրացման ենթակա են՝

ա) Ակումբի /թիմը ներկայացնող կազմակերպության/ անունը: Անունը պետք է համընկնի թերթիկի դրոշմակնիքի վրա նշված անվան հետ,

բ) թիմի անունը,

գ) հայտավորվող պաշտոնյաների ցուցակը /առաջին մասում/, լրացվում է ՀՖՖ-ում մուտքագրված անձնական համարը, ազգանունը, անունը, անձի պաշտոնը և հեռախոսահամարը,

դ) հայտավորվող ֆուտբոլիստների ցուցակը /երկրորդ մասում/, այդ թվում՝ ՀՖՖ-ում մուտքագրված անձնական համարը, ազգանունը, անունը, ծննդյան /օրը ամիսը տարեթիվը/

ե) Ակումբի ղեկավարի հաստատումը՝ ղեկավարի ազգանունը, ստորագրությունը, կնիքված կազմակերպության կնիքով, ՀՖՖ հայտավորման/վերահայտավորման/ ներկայացման ամսաթիվը:

զ) Անձնական համար չունենալու դեպքում հայտավորման/ վերահայտավորման/ թերթիկի հետ 12 տարին չլրացած ֆուտբոլիստների համար ներկայացվում է քաղաքացիական անձնագիրը, դրա երկրորդ և երրորդ էջերի պատճենները, անձնագիր չլինելու դեպքում՝ ծննդյան վկայականը և դրա պատճենը, տեղեկանք հանրակրթական դպրոցից, որտեղ պետք է փակցված լինի աշակերտի գունավոր նկարը, նշված լինի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին: Տեղեկանքը ստորագրվում և կնքվում է տնօրենի կողմից: Կնիքը պետք է դրվի նկարի վրա, նույն լուսանկարը՝ զետեղված ՀՖՖ-ի կողմից, պետք է տեղադրվի սահմանված ձևի վրա:

է) հայտավորվող/վերահայտավորվող յուրաքանչյուր ֆուտբոլիստի համար բուժհաստատության կողմից հաստատված տեղեկանք՝ ֆուտբոլիստի առողջական վիճակի մասին:



- 19.05** Համաձայն ՀՖՖ ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի (2020թ. խմբագրություն) 14-րդ հոդվածի 4-րդ կետի, ակումբի հետ աշխատանքային պայմանագիր կարող է ստորագրել միայն 16 տարին լրացած ֆուտբոլիստը: Միաժամանակ, 14-16 տարեկան ֆուտբոլիստի հետ պայմանագիր կարող է կնքվել ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ: 14 տարին չլրացած ֆուտբոլիստի հետ աշխատանքային պայմանագիր կնքելն արգելվում է:
- 14 տարին լրացած ֆուտբոլիստը մինչև 16 տարին լրանալը՝ անգամ ակումբի հետ պրոֆեսիոնալ պայմանագրի առկայության պարագայում, կարող է հայտավորվել միայն մանկապատանեկան առաջնություններին, վերոնշյալ դեպքում ֆուտբոլիստի 16 տարին լրանալուն պես նա կարող է հայտավորվել կամ վերահայտավորվել միայն պրոֆեսիոնալ առաջնության մասնակից թիմում:
- 19.06** Մ-18, Մ-16 և Մ-14 տարիքային խմբերի առաջնություններում հայտավորվող մարզիչները պետք է ունենան նվազագույնը B կարգի արտոնագիր, որը պարտադիր կերպով չի կիրառվի 2020/21 մրցաշրջանում և կգործի հաջորդ իսկ մրցաշրջանից:
- 19.07** Մ-12, Մ-10 տարիքային խմբերի առաջնություններում հայտավորվող մարզիչները պետք է ունենան նվազագույնը C կարգի արտոնագիր, որը պարտադիր կերպով չի կիրառվի 2020/21 մրցաշրջանում և կգործի հաջորդ իսկ մրցաշրջանից:
- 19.08** Վերահայտավորման դիմումի ցուցակում պետք է լրացնել միայն այն պաշտոնյաներին կամ ֆուտբոլիստներին, ովքեր պետք է լրացնեն թիմի կազմը:
- 19.09** Եթե վերահայտավորվող անձը միևնույն խաղաշրջանում եղել է հայտավորված մեկ այլ թիմում, ապա ՀՖՖ ՄԿԱ բաժին է վերադարձվում նախորդ թիմում ստացած մասնակցի քարտը /առկայության դեպքում/:
- 19.10** Թույլատրվում է հայտավորել Մ-18, Մ-16 և Մ-14 տարիքային խմբերի առաջնություններում՝ նվազագույնը՝ 18 ֆուտբոլիստ, առավելագույնը՝ 25 ֆուտբոլիստ, Մ-12 և Մ-11 տարիքային խմբերի առաջնություններում՝ նվազագույնը՝ 16 ֆուտբոլիստ առավելագույնը՝ 22 ֆուտբոլիստ և մինչև 5 պաշտոնյա /մարզչական կազմ, բժիշկ /բուժակ/, ադմինիստրատոր/: Ցանկացած պարագայում թիմում հայտավորված ֆուտբոլիստների քանակը չպետք է գերազանցի 25-ը / Մ-12, և Մ-10-ում՝ 22-ը/, իսկ պաշտոնյաներին՝ 5-ը: Հայտավորման ենթակա ֆուտբոլիստների նվազագույն քանակը (Մ-18, Մ-16 և Մ-



14 տարիքային խմբերում՝ 18 ֆուտբոլիստ, Մ-12 և Մ-10 տարիքային խմբերում՝ 16 ֆուտբոլիստ) չապահովելու դեպքում ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեն կայացնում է որոշում՝ սույն հոդվածի խախտման վերաբերյալ:

19.11 Մրցումներին մասնակից թիմերի հայտավորման ժամկետը սկսվում է 2020թ. սեպտեմբերի 11-ից և վերջանում է տվյալ առաջնության մեկնարկից 2 աշխատանքային օր առաջ:

19.12 Հայտավորման համար ակումբները ՀՖՖ Մրցումների կազմակերպման և անցկացման բաժնի կողմից ստանում են հաստատված գրաֆիկ, որը լրացուցիչ տրվում է ակումբներին: Թույլատրվում է հայտավորել ֆուտբոլիստներին սկսած 2020թ. սեպտեմբերի 11-ից մինչև գրաֆիկով նախատեսված օրը ներառյալ: Գրաֆիկով նախատեսված օրը ակումբները/թիմերը պարտավոր են ապահովել հայտավորվող ֆուտբոլիստների նվազագույն քանակը, որը Մ-18, Մ-16 և Մ-14 տարիքային խմբերում կազմում է նվազագույնը՝ 18 ֆուտբոլիստ, Մ-12 տարիքային խմբում նվազագույնը՝ 16 ֆուտբոլիստ և Մ-10 տարիքային խմբում նվազագույնը՝ 12 ֆուտբոլիստ: Թիմի կազմում մնացած ֆուտբոլիստներին թույլատրվում է հայտավորել լրացուցիչ, նախորդ կետի ժամկետի սահմաններում:

19.13 Տարիքային խմբերում հայտավորվող ֆուտբոլիստների նվազագույն քանակը չապահովելու դեպքում կնշանակվի կարգապահական տույժ:

19.14 Վերահայտավորման ժամանակահատված է սահմանվում առաջնության առաջին խաղից հետո՝ մինչև 2020թ. հոկտեմբերի 30-ը և 2021թ. փետրվարի 20-ից մինչև ապրիլի 20-ը:

19.15 Վերահայտավորումը 2021թ. փետրվարի 20-ից մինչև մարտի 20-ը ներառյալ անվճար է: Այլ ժամկետներում վերահայտավորելու համար սահմանվում է վճար յուրաքանչյուր ֆուտբոլիստի համար՝

- ✓ Մ-18 տարիքային խմբերի առաջնություններում՝ 1000 դրամ,
- ✓ Մ-16 և Մ-14 տարիքային խմբերի առաջնություններում՝ 500 դրամ,
- ✓ Մ-12 և Մ-10 տարիքային խմբերի առաջնություններում՝ անվճար:

19.16 Ակումբի մի թիմից մյուս թիմ վերահայտավորել թույլատրվում է միայն մեկ անգամ:



- 19.17 Ակումբի /թիմի/ պաշտոնյաների վերահայտավորումը ժամկետային սահմանափակում չունի և անվճար է:
- 19.18 Այն ակումբները, որոնք առաջնություններում կունենան երկու և ավելի թիմեր, պետք է հայտավորեն նվազագույնը՝ երեք պաշտոնյա, իսկ մեկ թիմի դեպքում՝ 2 պաշտոնյա:

ԳԼՈՒԽ 6: ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 20. Այլ հարցեր

- 20.01 Սույն կանոնակարգի դրույթ/ներ/ի խախտումը կամ չկատարումը առաջացնում է պատժամիջոցներ և/կամ տուգանքներ՝ համաձայն ՀՖՖ-ի «Կարգապահական կանոնակարգի»:
- 20.02 Առանձին դեպքերում, երբ խախտվել է կանոնակարգի դրույթ/ներ/ը՝ ակումբը կամ ակումբի որևէ պաշտոնյա իրավունք ունի ներկայացնելու բացատրագիր՝ մանրամասն նշելով հիմնավոր պատճառները, ոչ ուշ քան երկու աշխատանքային օրվա ընթացքում:
- 20.03 Սույն կանոնակարգով չնախատեսված դեպքերում և արտակարգ իրավիճակներում վերջնական որոշումը կայացվում է ՀՖՖ-ի կողմից:
- 20.04 Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում հաստատման օրվանից և գործում է մինչև 2020-2021թթ. մրցաշրջանի ավարտը:



ՀՖՖ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ (2020-2021 ՄՐՑԱՇՐՋԱՆ) ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Էդգար Մանուկյան	ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի պետ
Խորեն Զարգարյան	ՀՖՖ Մրցումների կազմակերպման և անցկացման բաժնի պետ
Բաբկեն Ղալոյան	ՀՖՖ Մրցումների կազմակերպման և անցկացման բաժնի մանկապատանեկան մրցումների կազմակերպման պատասխանատու

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ

ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ

ԽԱՆՁՅԱՆ ՓՈՂՈՑ 27

ԵՐԵՎԱՆ, 0010, ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԵՌ. +374 11 88 88 08

ԷԼ. ՓՈՍՏ. COMPETITION@FFA.AM

WWW.FFA.AM

